ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋ

ՀՐԱՄԱՆ № 146

«30» 12 2020 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՑԱԳՐԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 111 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության կատարած աշխատանքների արդյունքներն ամփոփելու մասին զեկուցագրի օրինակելի ձևը սահմանելու և Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի որոշումների, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի հրամանների ու հանձնարարականների պահանջների լիարժեք կատարումն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածով, «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազների (դատախազների), դատախազությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների արդյունքներն ամփոփել տարեկան կտրվածքով՝ Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի ընդլայնված նիստում:

2. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կողմից հաստատված ժամանակացույցի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի ու նրա տեղակալների մասնակցությամբ դատախազություններում անցկացնել համապատասխան ամփոփումներ:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական

դատախազությունների կողմից ներկայացվող տարեկան աշխատանքների մասին զեկուցագրի օրինակելի ձևը և դրա լրացման պարտադիր պահանջները՝ համաձայն հավելվածի (կցվում է):

4. **Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազների (դատախազների), մարզերի, Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների կողմից** կազմվող տարեկան աշխատանքների մասին զեկուցագրերը՝ օրինակելի ձևին համապատասխան, ըստ օրինակելի ձևում նշված հարցերի բնագավառների՝ կետերի, ենթակետերի և պարբերությունների հերթականության, օրինակելի ձևի լրացման պարտադիր պահանջների պահպանմամբ, համառոտ նշելով թվային տվյալները, դրանց համեմատական վերլուծության արդյունքում և (կամ) գործնական աշխատանքի ընթացքում հայտնաբերված հիմնախնդիրները, վերջիններիս օբյեկտիվ և (կամ) սուբյեկտիվ դրսևորումները, առանձին հանցատեսակների աճի կամ նվազման պատճառները, հանցագործությունների կատարմանը նպաստող հանգամանքները և հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունները, ներկայացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունվարի 30-ը:

5. **Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների, ավագ դատախազների և կայազորների զինվորական դատախազությունների կողմից** կազմվող տարեկան աշխատանքների մասին զեկուցագրերը՝ օրինակելի ձևին համապատասխան, ըստ օրինակելի ձևում նշված հարցերի բնագավառների՝ կետերի, ենթակետերի և պարբերությունների հերթականության, օրինակելի ձևի լրացման պարտադիր պահանջների պահպանմամբ, համառոտ նշելով թվային տվյալները, դրանց համեմատական վերլուծության արդյունքում և (կամ) գործնական աշխատանքի ընթացքում հայտնաբերված հիմնախնդիրները, վերջիններիս օբյեկտիվ և (կամ) սուբյեկտիվ դրսևորումները, առանձին հանցատեսակների աճի կամ նվազման պատճառները, հանցագործությունների կատարմանը նպաստող հանգամանքները և հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունները, ներկայացնել Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազին՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 5-ը:

6. **Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումները (բացառությամբ՝ սույն հրամանի 8-րդ կետով սահմանված Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների) մարզերի, Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների** ներկայացրած տարեկան աշխատանքների մասին զեկուցագրերն իրենց մասնագիտացման ուղղությունների և գործունեության մասով ամփոփում, դրանց արդյունքները ներառում են իրենց աշխատանքի մասին միասնական զեկուցագրում՝ օրինակելի ձևին համապատասխան, ըստ օրինակելի ձևում նշված հարցերի բնագավառների՝ կետերի, ենթակետերի և պարբերությունների հերթականության, օրինակելի ձևի լրացման պարտադիր պահանջների պահպանմամբ, համառոտ նշելով թվային տվյալները, դրանց համեմատական վերլուծության արդյունքում և (կամ) գործնական աշխատանքի ընթացքում հայտնաբերված հիմնախնդիրները, վերջիններիս օբյեկտիվ և (կամ) սուբյեկտիվ դրսևորումները, առանձին հանցատեսակների աճի կամ նվազման պատճառները, հանցագործությունների կատարմանը նպաստող հանգամանքները և հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունները, որը մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 10-ը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին:

7. **Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունը** Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների և ավագ դատախազների ու կայազորների զինվորական

դատախազությունների ներկայացրած տարեկան աշխատանքների մասին զեկուցագրերն ամփոփում, դրանց արդյունքները ներառում է միասնական զեկուցագրում՝ օրինակելի ձևին համապատասխան, ըստ օրինակելի ձևում նշված հարցերի բնագավառների՝ կետերի, ենթակետերի և պարբերությունների հերթականության, օրինակելի ձևի լրացման պարտադիր պահանջների պահպանմամբ, համառոտ նշելով թվային տվյալները, դրանց համեմատական վերլուծության արդյունքում և (կամ) գործնական աշխատանքի ընթացքում հայտնաբերված հիմնախնդիրները, վերջիններիս օբյեկտիվ և (կամ) սուբյեկտիվ դրսևորումները, առանձին հանցատեսակների աճի կամ նվազման պատճառները, հանցագործությունների կատարմանը նպաստող հանգամանքները և հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունները, որը մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 10-ը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին:

8. ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման ու միջազգային-իրավական համագործակցության վարչություններն իրենց տարեկան աշխատանքների արդյունքների մասին զեկուցագրերը, մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 10-ը, վերապահված լիազորությունների սահմաններում, լրացված վիճակում ներկայացնում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին:

9. ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարը՝ Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացրած տարեկան աշխատանքների մասին զեկուցագրերն ամփոփում, դրանց արդյունքները ներառում է միասնական՝ ՀՀ գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի հունիսի 29-ի N 43 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 39 հրամանով հաստատված կանոնադրության 26-րդ կետի 6-րդ ենթակետի հիման վրա ներկայացված հաշվետվությունում, որը, ուղեկցական զեկուցագրով, մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունվարի 30-ը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին:

10. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալները Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից ստացված «Հանցավորության վիճակի մասին», Հայաստանի Հանրապետության Կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 23-ի՝ «Մինչդատական վարույթը բնութագրող ցուցանիշների վիճակագրական հաշվետվությունների միասնական ձևերը և դրանց լրացման ու ներկայացման կարգերը հաստատելու մասին» N 1225-Ն որոշմամբ հաստատված՝ «Քննչական աշխատանքի մասին» (Ձև 1Մ) և «Դատախազի աշխատանքի մասին» կիսամյակային և տարեկան վիճակագրական ամփոփ տվյալների, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից տրված տարեկան աշխատանքների արդյունքների վերաբերյալ զեկուցագրերի հիման վրա, ըստ հանձնարարված ոլորտների, նախապատրաստում են զեկույց՝ ՀՀ դատախազության տարեկան աշխատանքների արդյունքների ամփոփման նպատակով անցկացվող ՀՀ դատախազության կոլեգիայի ընդլայնված նիստերում ներկայացնելու համար:

11. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2017 թվականի 28-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգում տարեկան աշխատանքների արդյունքների ամփոփման կարգը սահմանելու, տարեկան աշխատանքների մասին զեկուցագրերի օրինակելի ձևը հաստատելու և «Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգում դատախազների տարեկան աշխատանքների արդյունքների ամփոփման սահմաններն ընդգծելու և տարեկան

աշխատանքների մասին զեկուցագրի օրինակելի ձևը հաստատելու մասին մասին» Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 121 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 111 հրամանը:

12. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

13. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

14. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին ու դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված
ՀՀ գլխավոր դատախազի
«____» _____ 20 թ.
N __ հրամանի

Օրինակելի ձև

Հայաստանի Հանրապետության գլխավոր
դատախազ ..... ին
(Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազ)

Զ Ե Կ Ո Ւ Ց Ա Գ Ի Ր
20 _ թվականի ընթացքում «.....» դատախազության (ավագ դատախազի (դատախազի), վարչության, բաժնի) **կատարած աշխատանքների մասին**

«.....» դատախազությունը (ավագ դատախազը (դատախազը), վարչությունը, բաժինը), ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Դատախազության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումներով և ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով, որոշակի աշխատանք է կատարել դատախազական գործունեության արդյունավետության բարձրացման, օրինականության պահպանման, հանցագործությունների դեմ պայքարի, պետական շահերի, քաղաքացիների իրավունքների պաշտպանության և դատախազությանը վերապահված մյուս լիազորությունների իրականացման ոլորտներում:

Ստորև ներկայացվում են 20_ թվականի ընթացքում «.....» դատախազության (ավագ դատախազի (դատախազի), վարչության, բաժնի) կատարած աշխատանքներն՝ ըստ համապատասխան բնագավառների.

1. Հանցավորության վիճակը, կառուցվածքը, շարժընթացը, դրա կատարմանը նպաստող հանգամանքները, հանցագործությունների բացահայտումը

1) Ի կատարումն ՀՀ գլխավոր դատախազի 2008 թվականի մարտի 18-ի N 28 հրամանով հաստատված ՀՀ դատախազության կոլեգիայի 08.02.2008թ. նիստի (Արձանագրություն N 2) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի՝ ըստ հանցատեսակների ներկայացնել հանցավորության շարժընթացն ու կառուցվածքը, դրանցում արձանագրված փոփոխություններն ու դրանց պատճառները, բացահայտումը (առանձին անդրադառնալով սպանությունների, սպանության փորձերի, ավազակությունների դեպքերին, ինչպես նաև այն հանցագործությունների դեպքերին, որոնցով էական աճ կամ նվազում է արձանագրվել), վիճակագրական տվյալներ ներկայացնելուց բացի անհրաժեշտ վերլուծություններ և հետևություններ կատարել հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները պարզելու և վերացնելու ուղղությամբ, նշել նաև աշխատանքի ընթացքում ծագող հիմնախնդիրները և նախանշել դրանց վերացման ուղիներն ու միջոցները **(ըստ տարածքների ներկայացնում են մարզերի, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունները, Երևան քաղաքի ամփոփ տվյալները ներկայացնում է Երևան քաղաքի դատախազությունը, հանրապետական ամփոփ տվյալները ներկայացնում են ՀՀ գլխավոր դատախազության**

մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով, տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունները, զինվորական հանցագործությունների մասով, ըստ կայազորների, ներկայացնում են կայազորների զինվորական դատախազությունները, հանրապետական ամփոփ տվյալները՝ ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության և զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության բաժինները)

.....:

տեքստի շարադրանքը

2) Խոշտանգումների և թրաֆիքինգի դեպքերի շարժընթացն ու կառուցվածքը, դրանցում արձանագրված փոփոխություններն ու դրանց պատճառները, բացահայտումը, վիճակագրական տվյալներ ներկայացնելուց բացի անհրաժեշտ վերլուծություններ և հետևություններ կատարել հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները պարզելու և վերացնելու ուղղությամբ, նշել նաև աշխատանքի ընթացքում ծագող հիմնախնդիրները և նախանշել դրանց վերացման ուղիներն ու միջոցները (**ներկայացնում են ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության և մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունները)**

.....:

տեքստի շարադրանքը

3) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով (ինչպես նաև այդ հավելվածով չնախատեսված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 29-րդ գլխում) նախատեսված կոռուպցիոն հանցագործությունների դեպքերի շարժընթացն ու կառուցվածքը, դրանում արձանագրված փոփոխություններն ու դրանց պատճառները, բացահայտումը, վիճակագրական տվյալներ ներկայացնելուց բացի անհրաժեշտ վերլուծություններ և հետևություններ կատարել հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները պարզելու և վերացնելու ուղղությամբ, նշել նաև աշխատանքի ընթացքում ծագող հիմնախնդիրները և նախանշել դրանց վերացման ուղիներն ու միջոցները **(ըստ տարածքների ներկայացնում են մարզերի, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունները, Երևան քաղաքի ամփոփ տվյալները ներկայացնում է Երևան քաղաքի դատախազությունը, հանրապետական ամփոփ տվյալները ներկայացնում են ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով, ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության և ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունները, զինվորական դատախազության մասով, ըստ կայազորների, ներկայացնում են կայազորների զինվորական դատախազությունները, հանրապետական ամփոփ տվյալները՝ ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության և զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության բաժինները)**

.....:

տեքստի շարադրանքը

4) Ի կատարումն ՀՀ գլխավոր դատախազի 2008 թվականի մարտի 18-ի N 28 հրամանով հաստատված ՀՀ դատախազության կոլեգիայի 08.02.2008թ. նիստի (Արձանագրություն N 2) որոշման 4-րդ կետի 3-րդ ենթակետի և 12-րդ կետի ներկայացնել թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի, դրանց պրեկուրսորների մաքսանենգ ճանապարհով փոխադրման և հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (փողերի լվացման) դեպքերի շարժընթացն ու կառուցվածքը, դրանում արձանագրված փոփոխություններն ու դրանց պատճառները, բացահայտումը, վիճակագրական տվյալներ ներկայացնելուց բացի անհրաժեշտ վերլուծություններ և հետևություններ կատարել հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները պարզելու և վերացնելու ուղղությամբ, նշել նաև աշխատանքի ընթացքում ծագող հիմնախնդիրները և նախանշել դրանց վերացման ուղիներն ու միջոցները (**ներկայացնում են ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունները)** .....:

տեքստի շարադրանքը

5) Ի կատարումն ՀՀ գլխավոր դատախազի 2007 թվականի նոյեմբերի 1-ի N 63 հրամանով հաստատված ՀՀ դատախազության կոլեգիայի 03.10.2007թ. նիստի (Արձանագրություն N 5) օրակարգի 5-րդ հարցի որոշման 1-ին կետի 1.17 ենթակետի ներկայացնել տեղեկություն կրկնահանցագործությունների դեմ տարվող պայքարի մասին **(ըստ տարածքների ներկայացնում են մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունները, հանրապետական ամփոփ տվյալները՝ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով, մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով, տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունները, զինվորական դատախազության մասով, ըստ կայազորների, ներկայացնում են կայազորների զինվորական դատախազությունները, հանրապետական ամփոփ տվյալները՝ ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության և զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության բաժինները)** .....:

տեքստի շարադրանքը

6) Ի կատարումն ՀՀ գլխավոր դատախազի 2010 թվականի սեպտեմբերի 6-ի N 20 հրամանով հաստատված ՀՀ դատախազության կոլեգիայի 06.08.2010թ. նիստի (Արձանագրություն N 5) որոշման 3-րդ կետի ներկայացնել նախորդ տարիներին կատարված հանցագործությունների բացահայտման վերաբերյալ տվյալներ **(ըստ տարածքների ներկայացնում են մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունները, հանրապետական ամփոփ տվյալները՝ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով, մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով, տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, հասարակական անվտանգության դեմ ուղղված**

հանցագործությունների գործերով, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունները, զինվորական դատախազության մասով, ըստ կայազորների, ներկայացնում են կայազորների զինվորական դատախազությունները, հանրապետական ամփոփ տվյալները՝ ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության և զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության բաժինները)

.....:

տեքստի շարադրանքը

7) Ի կատարումն ՀՀ գլխավոր դատախազի 2017 թվականի նոյեմբերի 13-ի N 103 հրամանով հաստատված ՀՀ դատախազության կոլեգիայի 27.10.2017թ. նիստի (Արձանագրություն N 4) օրակարգի 1-ին հարցի որոշման 2-րդ կետի (Ներկայացնել քննությունից, դատից և պատժի կրումից խուսափող անձանց հայտնաբերման ուղղությամբ տարվող աշխատանքների վիճակը՝ ստուգելով կասեցված քրեական գործերի՝ օպերատիվ-հետախուզական մարմիններում գրանցված լինելու, դրանցով տրված հանձնարարականները և պատասխանները նշված մարմիններում կազմված գործերին կցված լինելու, ինչպես նաև այդ գործերը ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում հաշվառված լինելու հանգամանքները, ներկայացնել վերը նշված ստուգումների արդյունքներով հայտնաբերված անհամապատասխանությունների պատճառները պարզելու և վերացնելու ուղղությամբ ձեռնարկված դատախազական ներգործության միջոցները:

Ներկայացնել նաև հետախուզվողների հայտնաբերման ուղղությամբ կոնկրետ տարածքներում ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների աշխատանքների վիճակը, ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով վարույթը կասեցված քրեական գործերով մեղադրյալների նկատմամբ փաստացի հետախուզում չիրականացնելու դեպքերի պատճառները բացահայտելու ու վերացնելու ուղղությամբ ձեռնարկված միջոցները, հետախուզական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ոստիկանություն ներկայացված միջնորդագրերը և դրանց քննարկման արդյունքները:

Նշել նաև ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով կասեցված քրեական գործերով հետախուզվողներին, հատկապես ծանր և առանձնապես ծանր հանցանքի կատարման համար հետախուզվողներին հայտնաբերելու նպատակով կոնկրետ գործողություններ կատարելու վերաբերյալ նախաքննական մարմիններին տրված ցուցումների, ինչպես նաև փնտրողական աշխատանքներն ակտիվացնելու նպատակով հետաքննության մարմիններին տրված հանձնարարությունների քանակն ու դրանց կատարման արդյունքները) **(ըստ տարածքների ներկայացնում են մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունները, հանրապետական ամփոփ տվյալները՝ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով, մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով, տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության, ՀՀ ազգային**

անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունները, զինվորական դատախազության մասով, ըստ կայազորների, ներկայացնում են կայազորների զինվորական դատախազությունները, հանրապետական ամփոփ տվյալները՝ ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության և զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության բաժինները)

.....:

տեքստի շարադրանքը

2. Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ

1) ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով, մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով, տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունների, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության և զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության բաժինների, ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազների (դատախազների), մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազությունների կողմից ներկայացվում է մինչդատական վարույթում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում կատարված աշխատանքների և պրակտիկայի ամփոփումը, մասնավորապես նշելով՝

ա. Կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ դիմումների և հաղորդումների ընդունման, գրանցման, հաշվառման ու ընթացք տալու մասին օրենսդրության և մյուս համապատասխան իրավական ակտերի, հանձնարարականների (ցուցումների) պահանջների կատարման արդյունքները .....:

տեքստի շարադրանքը

բ. Քանի նյութի նախապատրաստման նկատմամբ է դատախազական հսկողություն իրականացվել (նշելով, թե դրանցից քանիսն են փոխանցվել նախորդ տարվանից, քանիսն են ստացվել այլ մարմիններից) և ինչ արդյունքներով, դրանցով կայացված որ տեսակի որոշումներից քանիսն են վերացվել (այդ թվում՝ դատավարական ղեկավարում իրականացնողների և վերադասների կողմից), ինչ հիմքերով, ինչ պատճառով և ինչ արդյունքներով .....:

տեքստի շարադրանքը

գ. Քանի քրեական գործի նախաքննության նկատմամբ է դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն իրականացվել /նշելով, թե դրանցից քանիսն

են փոխանցվել նախորդ տարվանից, քանիսն են ստացվել այլ մարմիններից/ և ինչ արդյունքներով, քրեական գործով վարույթը կարճելու և կասեցնելու մասին կայացված որոշումներից քանիսն են վերացվել (այդ թվում՝ դատավարական ղեկավարում իրականացնողների և վերադասների կողմից), ինչ հիմքերով, ինչ պատճառով և ինչ արդյունքներով /առանձին նշել նաև քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումից անջատ կայացված քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական հետապնդում դադարեցնելու մասին վերացված որոշումները/՝ .....:
տեքստի շարադրանքը

դ. Դատախազների կողմից քանի քրեական գործ է հարուցվել (նշելով, թե դրանցից քանիսն են կայացվել բողոքների քննարկման արդյունքում), քանի քրեական գործով է կայացվել քրեական գործի վարույթը կարճելու կամ կասեցնելու որոշում, ընթացիկ քրեական գործերով քանի որոշում է կայացվել քրեական հետապնդում չիրականացնելու կամ դադարեցնելու մասին /նշել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով կայացված որոշումները/ .....:
տեքստի շարադրանքը

ե. Քանի դեպքով է ձերբակալված անձը դատախազի կողմից ազատ արձակվել, ձերբակալման հիմքերը քանի դեպքով են բողոքարկվել դատարան, ինչ արդյունքներով՝ .....:
տեքստի շարադրանքը

զ. Քրեական գործերով կալանքը որպես խափանման միջոց կիրառելու քանի միջնորդություն է ներկայացվել դատարան /նշել, թե դրանցից քանիսն են ներկայացվել դատախազների կողմից/, դրանցից քանիսն են բավարարվել /նշել լրիվ, թե մասնակի/, քանիսն է մերժվել, ինչ պատճառով, բողոք է բերվել և ինչ արդյունքներով (կատարել համեմատական ուսումնասիրություն 1-ին և 2-րդ կիսամյակի միջև)՝ .....:
տեքստի շարադրանքը

է. Քրեական գործերով կալանքը ժամկետը երկարացնելու քանի միջնորդություն է ներկայացվել դատարան, դրանցից քանիսն են բավարարվել /նշել լրիվ, թե մասնակի/, քանիսն է մերժվել, ինչ պատճառով, քանի բողոք է բերվել և ինչ արդյունքներով (կատարել համեմատական ուսումնասիրություն 1-ին և 2-րդ կիսամյակի միջև)՝ .....:
տեքստի շարադրանքը

ը. Քանի քրեական գործերով քանի անձի նկատմամբ է կիրառվել գրավ՝ .....:
տեքստի շարադրանքը

թ. Քրեական գործերով քանի անձ է դատախազի կողմից կալանքից ազատ արձակվել, ինչ հիմքերով, կալանքը որպես խափանման միջոց կիրառելու, կալանքի ժամկետն երկարացնելու մասին քանի միջնորդություն է դատախազը դատարանից հետ վերցրել .....:
տեքստի շարադրանքը

ժ. Դատախազների (այդ թվում՝ դատավարական ղեկավարում իրականացնողների և վերադասների) կողմից քանի քրեական գործով քանի գրավոր ցուցում և հանձնարարական է տրվել, դրանցից քանիսի դեմ է ներկայացվել առարկություն, ինչ հիմքով և ինչ արդյունքներով .....:
տեքստի շարադրանքը

ժա. Դատախազների (այդ թվում՝ դատավարական ղեկավարում իրականացնողների և վերադասների) կողմից քանի քրեական գործով մեղադրական եզրակացություն չի հաստատվել և ՀՀ քր. դատ. օրենսգրքի 274-րդ հոդվածի 1-ին մասի 2-5 կետերով

նախատեսված որոշումներից որ մեկն է կայացվել, ինչ պատճառով և ինչ արդյունքներով .....:
տեքստի շարադրանքը

ժբ. Մինչդատական վարույթում ընդունված նյութերով քրեական գործերի հարուցումը մերժելու, վարույթը կարճելու և վարույթը կասեցնելու մասին որոշումներից քանիսն են դատական կարգով բողոքարկվել, ինչ հիմքով և պատճառով, այդ բողոքներից քանիսն են բավարարվել, ինչ պատճառով և ինչ արդյունքներով .....:
տեքստի շարադրանքը

ժգ. խուզարկության, փոստ-հեռագրական առաքումների, հեռախոսային խոսակցությունների սահմանափակման, ինչպես նաև դատավարական հարկադրանքի մյուս միջոցների կիրառման քանի միջնորդություն է դատախազի կողմից ներկայացվել դատարան, դրանցից քանիսն են բավարարվել և մերժվել, ինչ պատճառով, մերժման դեմ քանի բողոք է բերվել և ինչ արդյունքներով .....:
տեքստի շարադրանքը

ժդ. Դատախազների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածով սահմանված կարգով քանի միջնորդագիր և հաղորդում է ուղարկվել պատկան մարմիններին կամ կազմակերպություններին, դրանցից քանիսն են քննարկվել և ինչ արդյունքներով .....:
տեքստի շարադրանքը

ժե. Դատախազների կողմից քանի որոշում է կայացվել հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձին վարույթից հեռացնելու մասին, քանի միջնորդություն է ներկայացվել հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ, ինչ արդյունքներով .....:
տեքստի շարադրանքը

ժզ. Քանի ուսումնասիրություն, ստուգում և ամփոփում է կատարվել, այդ թվում աշխատանքի ծրագրի հիման վրա, և ինչ արդյունքներով .....:
տեքստի շարադրանքը

ժէ. Ի կատարումն ՀՀ գլխավոր դատախազի 2007 թվականի նոյեմբերի 1-ի N 63 հրամանով հաստատված ՀՀ դատախազության կոլեգիայի 03.10.2007թ. նիստի (Արձանագրություն N 5) օրակարգի 5-րդ հարցի որոշման 1-ին կետի 1.15 ենթակետի (Ամփոփել անչափահասների կողմից կատարված հանցագործությունների և մյուս իրավախախտումների կանխարգելման ուղղությամբ կատարված աշխատանքները, բացահայտել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և դատախազության ու իրավապահ մարմիններում տեղ գտած թերություններն ու բացթողումները և արդյունքների վերաբերյալ հաղորդումներ ներկայացնել շահագրգիռ կազմակերպություններին)՝ հայտնում եմ, որ .....:
տեքստի շարադրանքը

ժը. Ի կատարումն ՀՀ գլխավոր դատախազի 2007 թվականի նոյեմբերի 1-ի N 63 հրամանով հաստատված ՀՀ դատախազության կոլեգիայի 03.10.2007թ. նիստի (Արձանագրություն N 5) օրակարգի 5-րդ հարցի որոշման 1-ին կետի 1.8 ենթակետի (Յուրաքանչյուր տարի ամփոփել հանցագործությունների հետևանքով պետությանը պատճառված նյութական վնասի վերականգնման վիճակը և այդ մասին տեղեկություն ներկայացնել)՝ հայտնում եմ, որ .....:
տեքստի շարադրանքը

ժթ. Այլ հարցեր .....:
տեքստի շարադրանքը

2) **ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության կողմից ներկայացվում է՝**

ա. Իրավական օգնություն ցուցաբերելու մասին միջնորդությունների մասով կատարված աշխատանքների կապակցությամբ հայտնում եմ, որ .....:
տեքստի շարադրանքը

բ. Հանձնման մասին միջնորդությունների մասով կատարված աշխատանքների կապակցությամբ հայտնում եմ, որ .....:
տեքստի շարադրանքը

գ. Քրեական հետապնդում իրականացնելու մասին միջնորդությունների մասով կատարված աշխատանքների կապակցությամբ հայտնում եմ, որ .....:
տեքստի շարադրանքը

3. Դատարանում մեղադրանքի պաշտպանության և դատարանի դատավճիռների, վճիռների, որոշումների բողոքարկման ոլորտ

1) **ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով, մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով, տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունների, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության և զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության բաժինների, ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազների (դատախազների), մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազությունների** կողմից ներկայացվում է դատարանում մեղադրանքի պաշտպանության և դատարանի դատավճիռների, որոշումների բողոքարկման ոլորտում կատարված աշխատանքների ու պրակտիկայի ամփոփումը, մասնավորապես նշելով՝

ա. Քանի անձի վերաբերյալ քանի քրեական գործ է ուղարկվել դատարան, քանի քրեական գործով քանի անձի նկատմամբ է մեղադրանք պաշտպանվել, ինչ արդյունքներով, դատարան ուղարկված գործերից քանիսը վարույթ չի ընդունվել, ինչ պատճառով և ինչ արդյունքներով .....:
տեքստի շարադրանքը

բ. Քանի անձի վերաբերյալ քանի քրեական գործով է դատարանում կիրառվել դատական քննության արագացված կարգը և ինչ արդյունքներով, քանի դեպքով է դատախազն առարկել դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին ամբաստանյալի միջնորդության դեմ, ինչ արդյունքներով, քանի գործով է դատարանը մերժել դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությունը՝ դատախազի առարկության բացակայության պայմաններում .....:
տեքստի շարադրանքը

գ. Քանի քրեական գործով և քանի անձի մասով է մեղադրողը դատարանում հրաժարվել մեղադրանքից, ինչ հիմքով և ինչ արդյունքներով (քրեական գործի վարույթը

կարճելու, առանձին մեղադրյալների մասով քրեական հետապնդումը դադարեցնելու և այդ հիմքով դատարանի կողմից արդարացման դատավճիռ կայացնելու դեպքերը), ...:
տեքստի շարադրանքը

դ. Քանի քրեական գործով և քանի անձի մասով է դատարանների կողմից կայացվել արդարացման դատավճիռ կամ որոշում, ինչ հիմքով, այդ դատավճիռներից, որոշումներից քանիսն են բողոքարկվել, ինչ հիմքով և ինչ արդյունքներով .....:
տեքստի շարադրանքը

ե. Քանի քրեական գործով և քանի անձի մասով են դատարանի կողմից կայացվել վարույթը կարճելու և կասեցնելու որոշումներ, ինչ հիմքով, այդ որոշումներից քանիսն են բողոքարկվել, ինչ հիմքով և ինչ արդյունքներով .....:
տեքստի շարադրանքը

զ. Մեղադրողի միջնորդությամբ քանի գործով և քանի անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել կամ սահմանված պատժից ավելի մեղմ պատիժ է նշանակվել, ինչ հիմքով և ինչ արդյունքներով: Դատարանի նախաձեռնությամբ քանի գործով և քանի անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել կամ սահմանված պատժից ավելի մեղմ պատիժ է նշանակվել, դրա դեմ քանի բողոք է բերվել, ում կողմից, ինչ հիմքով և ինչ արդյունքներով .....:
տեքստի շարադրանքը

է. Քանի գործով և քանի անձի մասով դատարանի քանի դատավճիռ և որոշում է բողոքարկվել, ում կողմից (այդ թվում՝ ինչպես մեղադրող դատախազի այնպես էլ վերադաս դատախազի), ինչ հիմքով և ինչ արդյունքներով .....:
տեքստի շարադրանքը

ը. Քանի գործով է մեղադրողը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1 հոդվածով փոփոխել կամ լրացրել մեղադրանքը և ինչ արդյունքներով, 309.2 հոդվածով՝ հարուցվել է քրեական գործ և այլ անձի մեղադրանք առաջադրվել .....:
տեքստի շարադրանքը

թ. Քանի գործով է դատարանի դատավճռով կամ որոշմամբ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը վերաորակվել և ինչ հիմքով, այդ դատավճիռներից, որոշումներից քանիսն են բողոքարկվել, ինչ արդյունքներով .....:
տեքստի շարադրանքը

ժ. Քանի ուսումնասիրություն, ստուգում և ամփոփում է կատարվել, այդ թվում աշխատանքի ծրագրի հիման վրա, և ինչ արդյունքներով .....:
տեքստի շարադրանքը

ժա. Այլ հարցեր .....:
տեքստի շարադրանքը

4. Պետական շահերի պաշտպանության ոլորտ

1) ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազությունների կողմից ներկայացվում է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ և 29-րդ հոդվածներով սահմանված՝ պետական շահերի պաշտպանության բնագավառում դատախազության գործունեությանը

վերաբերող աշխատանքների մասին ներկայացնել տեղեկություններ և վերլուծություն, մասնավորապես նշելով՝

ա. Պետական շահերի պաշտպանության ոլորտում աշխատանքի ծրագրերի, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումների, ՀՀ գլխավոր դատախազի և ոլորտը համակարգող նրա տեղակալի հրամանների, կարգադրությունների, հանձնարարականների հիման վրա կատարված ուսումնասիրությունների ընթացքը և արդյունքները (նշել հայտնաբերված խախտումները, տրված նախազգուշացումները, ուղարկված հաղորդումները, պետությանը պատճառված վնասը և դրա վերականգնման վիճակը, հարուցված քրեական գործերը, հարուցված հայցերը և այլն) .....:

տեքստի շարադրանքը

բ. Պետական շահերի պաշտպանության ոլորտում հարուցված հայցերը և դրանց քննության ընթացքը (նշել պետական շահերի պաշտպանության ոլորտում հարուցված հայցերը, դրանց բնույթը, քննության ընթացքը, այդ թվում՝ հարուցված հայցերի քանակը, դրանցով նախատեսված բռնագանձման ենթակա գումարի չափը, քննության առնված հայցերի քանակը և դրանցով նախատեսված գումարի չափը, առանց քննության թողնված հայցերի քանակը, առանց քննության թողնելու հիմքերը, դրանցով նախատեսված գումարի չափը, դատարանի կողմից բավարարված հայցերի քանակը, դրանցով նախատեսված և բռնագանձման ենթակա ու փաստացի վերականգնված գումարների չափերը, դատարանի կողմից մերժված հայցերի քանակը, դրանցով նախատեսված գումարի չափը և դատարանի կողմից կարճված գործերը, կասեցված հայցերի քանակը և դրանցով բռնագանձման ենթակա գումարի չափը, հայցի ապահովման միջոցների և այդ ուղղությամբ ձեռնարկված միջոցները, դատախազների կողմից հայցից հրաժարվելու դեպքերը, այդպիսի հայցերով նախատեսված գումարի չափը, ինչպես նաև կատարողական վարույթներով պահանջատիրոջ լիազորությունների իրականացման ընթացքում պետական շահերի պաշտպանության վիճակը, այդ թվում՝ կատարողական վարույթների քանակը, դրանցով նախատեսված բռնագանձման ենթակա գումարի չափը, դրանց ընթացքը, կատարողական վարույթներով փաստացի բռնագանձված գումարի չափը, այդ ուղղությամբ ձեռնարկված միջոցների լիարժեքությունն ու արդյունավետությունը, կատարողական վարույթներով դատական ակտի կատարման անհնարինությունը, դրանց կապվածությունը գույքի վրա արգելանք դնելու միջնորդության բացակայության կամ կատարողական թերթը ուշացումով կատարման ներկայացնելու հանգամանքներին, հարկադիր կատարողի որոշումների հիմնավորվածությունն ու բողոքարկման հարցերը, սնանկության դիմումների հարուցումը, պարտատերերի դրամային պարտավորությունների չափը, որպես պարտատերեր գրանցվելը, սնանկության գործերի քննության ընթացքն ու արդյունքները և այլն) .....:

տեքստի շարադրանքը

գ. Դատական ակտերի բողոքարկումը (նշել դատական ակտերի բողոքարկումը (առանձին-առանձին՝ վերաքննության և վճռաբեկության կարգով), դրանց բնույթը (հայցի մերժման դեմ, գործի կարճման դեմ և այլն), քննության արդյունքները (այդ թվում՝ վարույթ ընդունելը (չընդունելը), հետ վերցնելը, դատարանի կողմից հետ վերադարձնելը, բավարարումը, մերժումը) և այլն) .....:

տեքստի շարադրանքը

դ. Այլ հարցեր .....:

տեքստի շարադրանքը

5. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ

1) **ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության համապատասխան ավագ դատախազի, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազությունների** կողմից ներկայացվում է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված՝ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության բնագավառում դատախազության գործունեությանը վերաբերող աշխատանքների և պրակտիկայի ամփոփումը, մասնավորապես նշելով՝

ա. Ձերբակալվածներին պահելու վայրերում (այդ թվում՝ ոստիկանության մարմիններում), քրեակատարողական հիմնարկներում, ինչպես նաև մյուս համապատասխան հիմնարկներում ու կազմակերպություններում կատարված ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքները (նշել ձերբակալվածներին պահելու վայրերում (այդ թվում՝ ոստիկանության մարմիններում), քրեակատարողական հիմնարկներում, ինչպես նաև մյուս համապատասխան հիմնարկներում ու կազմակերպություններում կատարված ստուգումների, ուսումնասիրությունների և հաղորդումների քանակը, բնույթը, ընթացքը, հայտնաբերված խախտումների քանակը, բնույթը, ընթացքը, դատախազի կողմից ապօրինի պահվող անձանց ազատումը, օրենսդրությանը հակասող կասեցված ակտերի քանակը, բնույթը և դրանց կապակցությամբ ձեռնարկված միջոցները, ներկայացված միջնորդագրերը, դրանց քանակը, բնույթը, ընթացքը, դատախազի միջնորդությամբ վերանայված՝ օրենսդրությանը հակասող ակտերի քանակը, բնույթը, հարուցված քրեական գործերի քանակը, բնույթը և ընթացքը, հարուցված հայցերի քանակը, բնույթը և ընթացքը, պատկան մարմիններին ուղարկված հաղորդումների քանակը, բնույթը, ընթացքը և այլն) .....:
տնքնաի շարադրանքը

բ. Այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումներում կատարված ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքները (նշել այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումներում կատարված ստուգումների և ուսումնասիրությունների քանակը, բնույթը, ընթացքը, հայտնաբերված խախտումների քանակը, բնույթը, ընթացքը, օրենսդրությանը հակասող կասեցված ակտերի քանակը, բնույթը և դրանց կապակցությամբ ձեռնարկված միջոցները, ներկայացված միջնորդագրերը, դրանց քանակը, բնույթը, ընթացքը, դատախազի միջնորդությամբ վերանայված՝ օրենսդրությանը հակասող ակտերի քանակը, բնույթը, հարուցված քրեական գործերի քանակը, բնույթը և ընթացքը, հարուցված հայցերի քանակը, բնույթը և ընթացքը, պատկան մարմիններին ուղարկված հաղորդումների քանակը, բնույթը, ընթացքը և այլն) .....:
տնքնաի շարադրանքը

գ. Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ստորաբաժանումներում կատարված ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքները (նշել դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ստորաբաժանումներում կատարված ստուգումների և ուսումնասիրությունների քանակը, բնույթը, ընթացքը, հայտնաբերված խախտումների քանակը, բնույթը, ընթացքը, գույքի բռնագրավումներով կատարողական վարույթն ավարտելու մասին հարկադիր կատարողի վերացրած որոշումների քանակը և դրանց կապակցությամբ ձեռնարկված միջոցները, դրանց քանակը, բնույթը, ընթացքը,

հարուցված քրեական գործերի քանակը, բնույթը և ընթացքը, հարուցված հայցերի քանակը, բնույթը և ընթացքը, պատկան մարմիններին ուղարկված հաղորդումների քանակը, բնույթը, ընթացքը և այլն) .....:
տեքստի շարադրանքը

դ. Դատախազի մասնակցությունը՝ դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ծանր հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ միջնորդությունների և դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված այլ հարցերի քննությանը դատարանում և դրանց արդյունքները .....:
տեքստի շարադրանքը

ե. Այլ հարցեր .....:
տեքստի շարադրանքը

զ. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման ու դատական ակտերի կատարման ոլորտում կատարված հանցագործություններով մինչդատական վարույթում և դատական քննության փուլում գտնվող գործերի մասին)՝ հայտնում եմ, որ .....:
տեքստի շարադրանքը

է. Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրված և հետագայում այլ խափանման միջոց ընտրելու կամ ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ նշանակելու հետևանքով կամ այլ հիմքերով կալանքից ազատված և այլ խափանման միջոց ընտրված անձանց դատարանի դատավճռով կալանավորելու պրակտիկայի մասին՝ հայտնում եմ, որ .....:
տեքստի շարադրանքը

ը. Անչափահասների նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու և վերջիններիս նկատմամբ ազատազրկման հետ չկապված դատական ակտերի կատարման մասին՝ հայտնում եմ, որ .....:
տեքստի շարադրանքը

թ. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված կամ պատիժը պայմանականորեն չկիրառած անձանց կողմից փորձաշրջանի մեջ գտնվելու ժամանակահատվածում նոր հանցագործություն կատարելու փաստերի մասին՝ հայտնում եմ, որ .....:
տեքստի շարադրանքը

ժ. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 431-րդ հոդվածի հիմքերով պատժի կատարումը հետաձգելու վերաբերյալ դատական ակտերի մասին՝ հայտնում եմ, որ .....:
տեքստի շարադրանքը

ժա. Քրեական գործերով հօգուտ պետության 10 միլիոն և ավելի դրամ բռնագանձելու վերաբերյալ դատական ակտերի մասին՝ հայտնում եմ, որ .....:
տեքստի շարադրանքը

ժբ. Անձանց հարկադիր բուժման ենթարկելու վերաբերյալ դատական ակտերի կատարման մասին՝ հայտնում եմ, որ .....:
տեքստի շարադրանքը

ժգ. Ներկայացնել տեղեկություն գույքի բռնագրավում պատժատեսակի կատարման ընթացքի վերաբերյալ .....:
տեքստի շարադրանքը

6. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտ

1) ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից ներկայացվում է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածներով սահմանված՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման բնագավառում դատախազության գործունեությանը վերաբերող աշխատանքների մասին ներկայացնել տեղեկություններ և վերլուծություն, մասնավորապես նշելով՝

ա. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտում «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև աշխատանքի ծրագրերի, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումների, ՀՀ գլխավոր դատախազի և ոլորտը համակարգող նրա տեղակալի հրամանների, կարգադրությունների, հանձնարարականների հիման վրա կատարված ուսումնասիրությունների ընթացքը և արդյունքները (նշել հայտնաբերված խախտումները, ուսումնասիրություն սկսելու հիմքերի առկայության ստուգման դեպքերը, ուսումնասիրություն չնախաձեռնելու որոշումների քանակը, սկսված ուսումնասիրությունների քանակը, ուսումնասիրության տվյալների նախնական ամփոփում, հարուցված հայցերը, հաշտության համաձայնությունները և այլն) .....:

տեքստի շարադրանքը

բ. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտում հարուցված հայցերը և դրանց քննության ընթացքը (նշել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտում հարուցված հայցերը, դրանց բնույթը, քննության ընթացքը, այդ թվում՝ հարուցված հայցերի քանակը, դրանցով նախատեսված բռնագանձման ենթակա գումարի չափը կամ գույքի արժեքը և քանակը, քննության առնված հայցերի քանակը և դրանցով նախատեսված գումարի չափը կամ գույքի արժեքը և քանակը, առանց քննության թողնված հայցերի քանակը, առանց քննության թողնելու հիմքերը, դրանցով նախատեսված գումարի չափը կամ գույքի արժեքը և քանակը, դատարանի կողմից բավարարված հայցերի քանակը, դրանցով նախատեսված և բռնագանձման ենթակա ու փաստացի վերականգնված գումարների չափերը կամ գույքի արժեքը և քանակը, դատարանի կողմից մերժված հայցերի քանակը, դրանցով նախատեսված գումարի չափը կամ գույքի արժեքը և քանակը և դատարանի կողմից կարճված գործերը, կասեցված հայցերի քանակը և դրանցով բռնագանձման ենթակա գումարի չափը կամ գույքի արժեքը և քանակը, հայցի ապահովման միջոցների և այդ ուղղությամբ ձեռնարկված միջոցները, դատախազների կողմից հայցից հրաժարվելու դեպքերը, այդպիսի հայցերով նախատեսված գումարի չափը կամ գույքի արժեքը և քանակը, կատարողական վարույթների քանակը, դրանցով նախատեսված բռնագանձման ենթակա գումարի չափը կամ գույքի արժեքը և քանակը, դրանց ընթացքը, կատարողական վարույթներով փաստացի բռնագանձված գումարի չափը կամ գույքի արժեքը և քանակը, այդ ուղղությամբ ձեռնարկված միջոցների լիարժեքությունն ու արդյունավետությունը, կատարողական վարույթներով դատական ակտի կատարման անհնարինությունը, դրանց կապվածությունը գույքի վրա արգելանք դնելու միջնորդության բացակայության կամ կատարողական թերթը ուշացումով կատարման ներկայացնելու հանգամանքներին, հարկադիր կատարողի որոշումների հիմնավորվածությունն ու բողոքարկման հարցերը) .....:

տեքստի շարադրանքը

գ. Դատական ակտերի բողոքարկումը (նշել դատական ակտերի բողոքարկումը (առանձին-առանձին՝ վերաքննության և վճռաբեկության կարգով), դրանց բնույթը (հայցի մերժման դեմ, գործի կարճման դեմ և այլն), քննության արդյունքները (այդ թվում՝ վարույթ

ընդունելը (չընդունելը), հետ վերցնելը, դատարանի կողմից հետ վերադարձնելը, բավարարումը, մերժումը) և այլն) .....:
տեքստի շարադրանքը

դ. Իրական շահառուների, փոխկապակցված անձանց շրջանակը և գույքի ծավալը պարզելու նպատակով օրենքով սահմանված շրջանակներում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին տրված օպերատիվ հանձնարարականների պահանջների կատարման արդյունքները .....:
տեքստի շարադրանքը

ե. Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրերով կամ տվյալ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող գույքի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով անհրաժեշտ տվյալներ պարունակող առցանց բազաներից և տեղեկատվության տրամադրման նպատակով օտարերկրյա պետության իրավասու մարմիններին ուղարկված խնդրանքների մասով կատարված աշխատանքները, ՀՀ տարածքում գտնվող գույքի առնչությամբ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված միջազգային հարցումների շրջանակներում ներկայացված խնդրանքների մասով ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից կատարված աշխատանքները .....:
տեքստի շարադրանքը

զ. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում կնքված հաշտության համաձայնությունների մասով կատարված աշխատանքները .....:
տեքստի շարադրանքը

է. Այլ հարցեր .....:
տեքստի շարադրանքը

7. Քաղաքացիների դիմումների և բողոքների քննարկման, ընդունելության ոլորտ

1) **ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների, ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազների (դատախազների), մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազությունների** կողմից համեմատական վերլուծության կարգով ներկայացվում է՝

ա. Քանի դիմում (այդ թվում՝ հանցագործության մասին հաղորդում) է ստացվել, ումից, ինչ բնույթի, դրանցից քանիսն են ըստ էության քննարկվել, դրանցից քանիսն է բավարարվել, քանիսն է մերժվել .....:
տեքստի շարադրանքը

բ. Քաղաքացիների քանի ընդունելություն է կազմակերպվել, դրանցից քանիսն է կազմակերպվել դատախազի նախաձեռնությամբ, ինչ արդյունքներով:

..... Ա.Ա.Հ.

ավագ դատախազի (դատախազ), դատախազության (ստորաբաժանման) ղեկավարի ստորագրություն

«Համաձայն եմ»

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ

..... Ա.Ա.Հ

ստորագրություն

« » ..... 20 թ.

Լրացման պարտադիր պահանջներ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազների (դատախազների), ինչպես նաև դատախազությունների կողմից կազմվող և ներկայացվող տարեկան աշխատանքների մասին զեկուցագրի օրինակելի ձևի (հանդիսանում է օրինակելի ձևի անբաժանելի մասը)

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազների (դատախազների), ինչպես նաև դատախազությունների կողմից կազմվող և ներկայացվող տարեկան աշխատանքների մասին զեկուցագրի օրինակելի ձևի (այսուհետ՝ օրինակելի ձև) կետերի ենթակետերում և պարբերություններում նշված պահանջների վերաբերյալ տվյալները ներկայացնում են օրինակելի ձևի համապատասխան կետերի ենթակետերում որպես ներկայացնող նշված՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազները (դատախազները), ինչպես նաև դատախազությունները՝ իրենց համապատասխան իրավասության սահմաններում, ըստ տվյալ ենթակետի պարբերությունում նշված պահանջի:

2. Օրինակելի ձևի կետերի ենթակետերի պարբերություններում համապատասխան տեղեկությունները ներկայացնելիս սկզբից գրվում է օրինակելի ձևում նշված համապատասխան վերնագիրը (այնպես, ինչպես նշված է օրինակելի ձևում), որի տակ նոր տողից շարադրվում է տեքստը՝ դրանում ընդգրկելով համապատասխան պարզաբանման մեջ նշված հարցերի շրջանակն ու դրանց ծավալները:

3. Օրինակելի ձևի կետերի ենթակետերի պարբերություններում վիճակագրական տվյալները պետք է համապատասխանեն տարեկան կտրվածքով ներկայացվող «Քննչական աշխատանքի մասին (Ձև 1 Մ)» և «Դատախազի աշխատանքի մասին» համապատասխան վիճակագրական հաշվետվությունների համանուն տվյալներին, ինչպես նաև դրանք պետք է վերլուծել՝ համեմատելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համանման տվյալների հետ, ցույց տալ վիճակագրության աճը կամ նվազումը, դրանց օբյեկտիվ կամ սուբյեկտիվ դրսևորումները, վերլուծել երևույթների աճի կամ նվազման պատճառներն ու հանցագործությունների կատարմանը նպաստող հանգամանքները, կատարել հետևություններ՝ շեշտը դնելով ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների վերլուծության վրա:

4. Օրինակելի ձևի կետերի ենթակետերի պարբերություններում նշվում են դատախազական ակտերի (որոշում, հրաման, կարգադրություն, միջնորդագիր, ցուցում), հանձնարարականների, հաղորդումների, միջնորդությունների, նախազգուշացումների, ինչպես նաև դատախազական ներգործության և դատախազությանն օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացման մյուս միջոցների մասին, որոնք տրվել կամ կայացվել են հարցի կարգավորման ընթացքում:

5. Զեկուցագրերում բացահայտվում են վերլուծության ենթակա հարցերի հետ կապված հիմնախնդիրները և ներկայացվում են դրանց լուծմանն ու կարգավորմանն ուղղված առաջարկներ:

6. Քննարկվող հարցերի շուրջ ներկայացվում են առնվազն մեկ կամ երկու բնութագրող օրինակ:

7. Օրինակելի ձևի կետերի ենթակետերի պարբերություններում ընդգրկվելիք տվյալները ներկայացվում են հնարավորինս սեղմ, ընդգրկուն և բովանդակալից:

8. Սույն հրամանում նշված պահանջների կատարման վերաբերյալ նյութ կամ աշխատանք չունենալու դեպքում օրինակելի ձևի կետերի ենթակետերի պարբերություններում համապատասխան նշում է կատարվում այդ պարբերության վերնագրից հետո, նշելով՝ «տվյալներ չկան» բառերը:

9. Օրինակելի ձևում նշված կետում նոր վերլուծություններ կատարելու անհրաժեշտության դեպքում տվյալ կետի ենթակետի պարբերություններից հետո կարող է ավելացվել նոր պարբերություն՝ չխախտելով օրինակելի ձևում նշված նախկին պարբերությունների հերթականությունը:

10. ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներն իրենց գործունեության վերաբերյալ աշխատանքի արդյունքներն ամփոփում և միացնում են իրենց մասնագիտացման ուղղությունների մասով մարզերի, Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների ներկայացրած արդյունքներին և միասնական զեկուցագրով ՀՀ գլխավոր դատախազին են ներկայացնում տվյալ մասնագիտացման ուղղության վերաբերյալ ընդհանրական զեկուցագիր:

11. ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազները իրենց կատարած աշխատանքի մասով ամփոփում և զեկուցագրով ՀՀ զինվորական դատախազին են ներկայացնում իրենց կողմից կամ իրենց մասնակցությամբ կատարված աշխատանքների մասին օրինակելի ձևի համապատասխան կետերի ենթակետերի պարբերություններում նշված պահանջների կատարման արդյունքները:

12. ՀՀ զինվորական դատախազությունը, իրեն վերաբերող մասով, ամփոփում և միասնական զեկուցագրով ՀՀ գլխավոր դատախազին է ներկայացնում ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազների, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների և կայազորների զինվորական դատախազությունների ներկայացրած աշխատանքների մասին արդյունքները՝ դրանցում ընդգրկելով և հաշվի առնելով զինվորական հանցագործությունների, ինչպես նաև զինվորական դատախազությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների՝ վերլուծության ենթակա առանձնահատուկ բնագավառների (օրինակ՝ ըստ ՀՀ զինված ուժերի առանձին տեսակների, կայազորների, զինծառայողների տեսակների (սպայական, ենթասպայական, սերժանտական, շարքային կազմեր) և այլն) առանձնահատկությունները:

13. ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման և միջազգային-իրավական համագործակցության վարչություններն իրենց զեկուցագրերը ներկայացնում են ըստ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի հունիսի 29-ի N 43 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 39 հրամանով հաստատված կանոնադրության և մյուս համապատասխան իրավական ակտերով, հանձնարարականներով (ցուցումներով) իրենց վերապահված լիազորությունների (գործառույթների) հերթականությամբ վերլուծության:

14. ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները ՀՀ գլխավոր դատախազին, իսկ ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության բաժինները

ՀՀ զինվորական դատախազին իրենց զեկուցագրերը ներկայացնում են համապատասխան ոլորտը համակարգող ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի և ՀՀ զինվորական դատախազի տեղակալների հետ (նրանց համակարգման ոլորտում գտնվելու դեպքում) գրավոր (ստորագրությամբ) համաձայնեցնելուց հետո:

15. Զեկուցագրում վիճակագրական տվյալները լրացվում և դրանց հավաստիությունն ու ճշգրտությունը ստուգվում են սկզբնական հաշվառման փաստաթղթերով ու մատյաններով:

16. Զեկուցագիրը պատշաճ ու անթերի լրացնելու աշխատանքները, ըստ իրավասության համապատասխան սահմանների, կազմակերպում, ղեկավարում ու վերահսկում են ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ զինվորական դատախազության ավագ դատախազները (դատախազները), ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներն ու դատախազությունները ղեկավարող դատախազները, որոնք զեկուցագիրը ներկայացնելուց առաջ ստուգում և ստորագրում են այն, ինչպես նաև պատասխանատվություն են կրում դրանում արտացոլված վիճակագրական տվյալների ամբողջականության, ճշգրտության, կատարված վերլուծությունների արդյունավետության, զեկուցագիրը օրինակելի ձևին համապատասխան կազմելու և սահմանված ժամկետում ներկայացնելու համար:

17. Տարեկան աշխատանքների մասին զեկուցագրի թղթային տարբերակի հետ ներկայացվում է նաև էլեկտրոնային տարբերակը: